ցանք մի յոդուած, որտեղ նա առաջարկում է կազմել մի բժշկական օգնութեան կոմիտէ վանեցիների համար։ Մի ենթադրեմ ժամանակ մենք ստացանք նրանից 25 ր. նուէր յոդուտ նոյն կոմիտէի։

—

Ստացանք յոդուտ Թիւրքաց Հայաստանի սովալլուկների 2 բուրլ ս. Գարրէն Մարտենից։ Պարոնը ԲԱԳՈՒ քաղաքի բնակիչ է։

—

ՎԼԱԴԻՎԱՎԿԱՍԻՑ ստացանք հետեւեալ նամակը։ «Թէքեան վիճակի երեցաչխները, տեղեկանալով մեր լրագրից Վլադիվաստոկի հայ սովամահ ժողովրդի անտանելի դրութեան մասին, հանգանակութիւն բաց արին, որից զոյացաւ 53 բուրլ. որ և ուղարկում ենք ձեզ, խնդրելով հաղորդել ուր հարկն է։ Մի և նոյն ժամանակ, նուէրատուները պատկանելով զանազան ազգութիւններին, խնդրում են որ այդ մեր նամակը արտատպվի հայ լրագիրներումն։»

—

Ստացանք ՎԼԱԴԻՎԱՎԿԱՍԻՑ 6 բուրլ յոդուտ Վանի սովատանջների հետեւեալ անձինքներից. Մաղեարեան 1 ր., Անդրան 1 ր., Տրեաբեռ 1 ր., Ոսիկեր 5 ր. Ղազարեան զուտի Աւետիքեան 3 բուրլ։ Ընդամենը 6 բուրլ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱ

Բիւրօնտիլդի մինիստրութեան անկումն և ազատական կուսակցութեան յաղթութիւնը, ինչպէս ներքսական միւս պետութիւններին, նոյնպէս և Թիւրքիային ոչինչ ցաւակցութիւն չեն պատճառում։

Կ. Պոլսում հրատարակվող «Ակիֆ» լրագիրը մի յոդուած է տպել, որից երևում է, թէ ինչպէս է վերարերվում Թիւրքիայի հասարակական կարծիքը Բիւրօնտիլդի մինիստրութեան բաղաքական գործունէութեանը։ «Ակիֆ» լրագիրը այդ քաղաքականութեան վրա հետևեալ մեկնարանները է բարձում։

1) Բիւրօնտիլդի քաղաքականութեան հետևանքներից մէկն այն էր, որ Կասմ-փաշայի մեռ եղած խորհրդի ժամանակ Ռուսաստանի պահանջները յոդուտ Բօլգարիայի հաստատութիւն դան պետութիւնների կողմից։ Որովհետև կայսերական կառավարութիւնը հարկաւոր համարեց չը դնել այդ պահանջները, վից մեծ պետութիւնների գեսպաններին թողին Կ. Պոլիս։

2) Բիւրօնտիլդի քաղաքականութեան միւս հետևանքը այն էր, որ Լօնդոնի պրոտոկոլը սառեցվեցաւ առանց մեր գիտութեան և համաձայնութեան։ Այդ պրոտոկոլի յոդուածներից մէկը պահանջում էր մեզանից արձակել մեր զօրքերը և այն էլ այնպիսի մի ժամանակ, երբ Ռուսաստանը 400—500 հազար զօրք ունի էր կանգնեցրել և զինուորել։ Թիւրքաց կառավարութիւնը դարձեալ ստիպվեցաւ մերժել նրա բարեկամական այդ պահանջը։

3) Բիւրօնտիլդի մինիստրութեան քաղաքականութեան երրորդ հետևանքը այն եղաւ, որ պատերազմը յայտնելու բոլոր, անգլիական դեսպանը Կ. Պոլսում կամենալով ապացուցանել Անգլիայի դէպի մեզ ունեցած մեծ բարեկամութիւնը, խորհուրդ էր տալիս պահել և Բ. Դրանը չը պատերազմել։ Կայսերական կառավարութիւնը նկատելով, որ Անգլիան նոյն խորհուրդներով չէ դիմում Ռուսաստանին, ստիպված եղաւ անուշադիր թողնել Անգլիայի բարեկամական այդ խորհուրդը։

4) Բիւրօնտիլդի քաղաքականութեան չորրորդ հետևանքը այն եղաւ, որ երբ Ռուսաստանը մեզ պատերազմ յայտնեց, Թիւրքիան միայնակ էր և դաշնակիցներ չունէր։ Անգլիան ոչ թէ միայն չաջակցեցաւ, որ Եւրոպան օգնէր մեզ, այլ իր բռնած սառը և անտարբեր դիրքով խանգարեց ամեն տեսակ օգնութիւնը, որ կարող էր մեզ հասնել և այն էլ այնպիսի մի ժամանակ, երբ Բերլինի և Ուեղարիայի հասարակական կարծիքները մեզ չափազանց համակրում էին։

5) Բիւրօնտիլդի քաղաքականութեան հինգերորդ հետևանքը այն էր, որ երբ պատերազմը վերջանում էր, անգլիական դիպլոմատիան նստատեղը մտաւ Միկերիրիան Ֆոնը և պահանջեց, որ նրան թոյլ տրվի անցնել Կարդանելիան նեղուցից։ Բ. Դուռը պատասխանեց, որ իր համաձայնութիւնը կը պարտաւորեցնի Անգլիային պատերազմ յայտնել Ռուսաստանին։ Բ. Դրան այդ պատասխանը առաջի էր տալիս Անգլիային ամենաբիչ գոնեա սպառնալ Ռուսաստանին։ Փոխանակ այդպէս վարվելու, անգլիական նստատեղը անցաւ նեղուցը առանց ուշադրութիւն դարձնելու մեր բոլորի վրա։ Կատարված այդ իրողութիւնից յետոյ Ռուսաստանը շտապեցրեց իր ընթացքը դէպի Կ. Պոլիս և ի նկատի ունենալով Անգլիայի թուլութիւնը և անզօրութիւնը և փոխանակ նրան թշնամի համարելու, սկսեց նրա վրա նայել իբրև դաշնակցի վրա։

6) Բիւրօնտիլդի քաղաքականութեան վեցերորդ հետևանքը էր, որ Բերլինի կոնգրեսի մէջ յաղթողի իրաւունքը բարձր դասվեցաւ, մեր երկիրը բաժանվեցաւ և մեր իրաւունքը զոհվեցաւ։

7) Վերջապէս Բիւրօնտիլդի քաղաքականութեան հետևանքներից մէկն էլ այն էր, որ Կիպրոսի դաշնագրութեան համեմատ մեր ամենաթանկ կղզիներից մէկը անցաւ Անգլիայի իշխանութեան տակ իբրև վարձարութիւն նրա մեզ տուած բարոյական և զորական օգնութեան համար, մինչդեռ մենք բաղդ չունեցանք տեսնել նրա ոչ զորական և ոչ բարոյական օգնութիւնը։ Դրանք են, ասում է վերջը «Ակիֆ» լրագիրը, Բիւրօնտիլդի քաղաքականութեան հետևանքները, որոնք ի հարկէ լաւ դիշատակ չեն կարող թողնել։

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

—

Սարպրուքրդ, մարտ.

Ցանկարնակ մեր հայ եղբայրների սովատանջ և ազնտալի զրութիւնը զրգռեց և մեր եւրոպական հայ ուսանողութեան մէջ նոյն մարդասիրական զգացմունքները, որոնցով հիշում է այժմ մեր իւրաքանչիւր հայրենակիցը։

Եւրոպայում հանգանակութեան գործի համար ընդունվում ասւոդը եղաւ փարզում նոր հիմնված «Հայկական ուսումնասիրաց» ընկերութիւնը, որից և ես դիմեցի ստացայ նոյն գործը գերմանական ուսանողութեան մէջ յոդորելու։ Պրոմպտիալ չտապում եմ հասցնել ձեզ իմ հանգանակութեան արդիւնքը, որին մասնակցեցին այստեղի համալսարանի իմ մի քանի բարեկամները։ Շնորհակալութիւն յայտնելով այդ պարոնեներին, խնդրում ձեր լրագրի մի փարթի անկիւնը տնօրէնք նրանց անուններին։ Z. G. Jolos 4 ֆ., G. Wartanian 2 ֆ., P. Chr. Hansen 1 ֆ., Frau Kayser 1 ֆ., Louis Bazin 60 սանտիմ, E. Struck 1 ֆ. 25 սանտ., Dr. Ascherodt 2 ֆ. 50 սանտ., Rosenberg 2 ֆ. 50 ս., Schnackenburg 1 ֆ. 25 ս., E. Hansen 2 ֆ. 50 ս., Knorrsche Tischgesellschaft 2 ֆ. 50 ս., Herzog Georg von Mecklenburg 6 ֆ. 25 ս., Oberst Tilo 12 ֆ. 50 ս., Aw. Ar. 6 ֆ.։ Գումարն է 45 ֆրանկ 85 սանտիմ (ռուսաց փոխով 17 բուբլ) որ կը կարգադրէք ըստ հարկին։

Ա. Ա.

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՑ

ՄՈՍԿՎԱ, 11 ապրիլի։ Երէկ, ապրիլի 10-ին Մոսկվայի զինուորական դատարանը վերջացրեց Սարտյանովի լիցքի վից ուսանողների գործը, որոնք մեղադրվում էին պետական յանցանքների մէջ։ Ամբոխ հետևաղ է. Սարատովին ուղարկել խելագարների տունը վարձելու համար։ Կոզլրեսվին և Բլյոսկիսովին ենթարկել տաժանակիր աշխատանքների առաջինին ութ տարով, երկրորդին չորս տարով։ Սարատովի քաղաքային ուսումնարանի ուսուցչ Անտուշեվին ենթարկել տաժանակիր աշխատանքներին վեց տարով։ Սարատովի սեմինարիայի ուսանողներին։ Վինոգրադովին բանտարկել երեք ամսով, Բոգոլյուբովին մի ամսով։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 ապրիլի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ր. 37½ կ., երկրորդ 92 ր. 87½ կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր. 12½ կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 226 ր., երկրորդ 220 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 62½ կ., երկրորդ 90 ր. 87½ կ., երրորդ 90 ր. 75 կ., ոսկի 7 ր. 80 կ։ Ռուսաց 1 բուբլ Լոնդոնի վրա արժէ 25 13/16 պէնս, ռուսաց 100 ր. Գերմանիայի վրա արժէ 127 մարկ 25 պֆ., Համբուրգի վրա 215 մարկ, Փարիզի վրա 265 ֆր. 25 սանտիմ։ Տրամադրութիւնը ամուր է։

ԼՈՆԴՈՆ, 12/24 ապրիլի։ Երկի երեկոյան Գլադստոն տեսակցութիւն ունեցաւ Բիաքոնսֆիլդի հետ և նոր մինիստրութիւն կազմելու յանձնարարութիւն ընդունեց։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 ապրիլի։ Նշանակվեցաւ Գարանիսի առոյգութիւնը հետզհետէ լաւանում է։

ԼԱՐՈՒՆ, 11 ապրիլի։ Սարիյատի զորաբաժնի առաջապահները մտան Դաղնի, 15,000 աֆղանցիներ յարձակվեցան Սարիյարի վրա, բայց հետ մղվեցան։ Աֆղանցիները զոհվեցին 1,000, իսկ անպտիսցիները 132 մարդ։

Կ. ՊՈԼԻՍ, 10/22 ապրիլի։ «Levant Herald» լրագիրը դադարեցրած է Հայաստանի մասին յոդուածի տպագրումը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 ապրիլի։ Երէկ վերջացաւ Վիսլենեվների գործը։ Դատարանը վճռեց ենթարկել տաժանակիր աշխատանքների գործարանների մէջ հետևեալ անձինքներին. Վիկտոր Վիսլենեվին և Կաուտզովին 4 տարով, Վլադիսլավ Վիսլենեվին 10 տարով։ Դատարանը վճռեց միջնորդել, որ այդ պատիժը աքսորանքով փոխարինվի։ Կասատկայա, Սարբոշեվիչ, և Մոսոնեվա արդարացրած են։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՍՊԵՐՈՒՆ

ռունին, ձեռքը պարզելով դէպի զինուորները, որոնք դեռ չէին դադարել իրանց անիրաւ վարմունքից։

—Գիժին տարան հարամներ, ասաց դյուղեղ մեր ամենից լաւ էր։—Ի՞նչ պիտի դնան և ինչու են գնում, ուսանողներն է պակաս, թէ խմիչները, պատասխանեց էֆենդին անհոգ ծիծաղով։

Այս ծիծաղը աւելի վիրաւորեց ծերունու առանց դրան ևս վշտացած սիրտը։ Էֆենդին նկատելով այդ, փոխեց իր խօսքը.

—Դարդ մի արա, ամուսնէր խաչ, քանի որ Թօմաս էֆենդին կենդանի է, չի թողնի, որ քո գլխից մի մազ պակսի։

—Էյ ինչպէս չի պակսի... պատասխանեց ծերունին մի փոքր զայրացած ձայնով,—չեմ տեսնում, իմ տունը իմ աչքի առջև քանդում են... իմ կայքը իմ աչքի առջև բաժանում են... և ես զրկելու իրաւունք չունեմ...

Նա կրկին ցոյց տուեց զինուորներին.

—Այդ նրանց սովորութիւնն է։—Ճշմարիտ, երբ դասալիքներն կը մնան, մի ուրիշ կը վերառնեն։

—Դու ինքդ չու դիտես, ամուսնէր խաչ, երբ թուրքը հաչի տունն է մտնում, ձեռքը զարդակ չէ դուրս գալիս։ Բայց բանը դրանում չէ։ Պէտք է փառք տալ Աստուծն, երբ վիրաւորում է մարդու արարքին և ոչ կնոջին...

Ծերունին ամբողջ մարմնով դողաց։ Նա այժմ այնքան զայրուն էր դարձել, որ իւրաքանչիւր խօսքի ազդեցութիւն էր դարձել, որ իւրաքանչիւր խօսքի ներգործում էր նրա վրա։

—Ի՞նչ կայ, ինչ, յայտնվեց նա հանկարծութիւնից դուրս գալով,—եթէ կայ մի ուրիշ բան, ասա, էլ ինչու ես տանջում ինձ, եթէ մոռնելու եմ, թող չուտ մոռնեմ։

—Կասեմ, յոլորը կասեմ, ամուսնէր խաչ, համբերութիւն ունեցիր, պատասխանեց էֆենդին, այժմ աւելի հանգիստ և աւելի լուրջ կերպարանք ընդունելով։

Եւ նա սկսեց պատմել (զարմանալ էշերի կեանքից մի նոր առածի վրա հիմնելով իր միտքը) թէ ինչը չը պիտի քացի տայ խիտի դէմը, եթէ չի ցանկանում իր սոր վիրաւորել... Եւ այս առածից այն եզրակացութիւնը դուրս բերեց, թէ հաճիր այն եզրակացութիւնը դուրս բերեց, թէ հաճիր պէտք է զղջալ մեզնեն և չը հակառակվեն թուրքերին, մանաւանդ այդ պատերազմական օրերում։ Եւ օրինակ բերելով Վանի հղկելը, նա սկսեց ապացուցանել, թէ մեծ պետութիւնն է սկսեց ապացուցանել, թէ մեծ պետութիւնն է թուրքերին անհաւատարիմ լինելը։ Նա բացատրեց թէ ինչու Վանում թուրքերը ազատեցին մի քանի հազար հայոց խանութներ և կողոպտեցին նրանց ապրանքները —Որովհետև, ասաց նա, այնտեղ հայերը ռուսների համար լրտեսութիւն էին անում։ Այս բոլորից յետոյ, աւելացրեց նա, թէ այս պատերազմից հայերը ոչինչ օգուտ չը պիտի ստանան։ Եւ կրկին դառնալով դէպի հաւատարմութեան մէջերը, նա ասաց, թէ թուրքերը ազատեն վատ չեն, որքան մենք կարծում ենք, թէ հայերի վիճակը կրկնված է թուրքերի հետ, և այս պատճառով ամեն մի ազատամարտական խորհուրդ պէտք է ոչնչացնելու համարել։ Եւ դրա համար էֆենդին պ. Սամսոնի վարմունքը խիստ գովելի է համարում, և ամենևին չի վշտանալ, եթէ նա ազատվի կը պատժվի։ Միայն ցաւում է, որ նա նրանց պատճառով մի քանի մարդիկ ևս պիտի է պատժվի ենթարկվեն....

—Ինչ մարդկեր, կարեց ծերունին նրա խօսքը, ցունամփոփելով։

—Դու և քո երկու որդիներ՝ Հարությունը և և Ապան, և քո միւս երիրը—Վարդանը, պատասխանեց էֆենդին։

Հարությունը սատակ էր, և կարող էր մինչդամիրց ազատվածներ որդիների ծերունու։ Բայց ասենչանքներով լի կնոջը, մշտական գոնգը և տառապանքները այն ստիպեցան մեկ էին նրա սիրտը, որ կարողացաւ դիմանալ էֆենդու բօքից խօսքին, և պահպանելով իր հանգստութիւնը հարցրեց.

—Մենք ինչով ենք մեղաւոր։

—Օրհնած, այնպիսի մարմնոց հարցմունք ես անում, որ երեխան էլ չի անիլ։ Կարծես, ինքդ չը գիտես, թէ ինչով էք մեղաւոր, պատասխանեց էֆենդին դառն հեգնութեամբ։—Մի բոլորովին ազատ մարդ ինչով է մեղաւոր, որ նրան հիւանդի տեղ են դնում, նրա համար միայն, որ նա դուրս էր եկել ժամանակով կամ քօլերայով վարակված մի հասարակութեան մէջից և կանանում էր մի օտար երկիր գնալ, որ ազատվէր այդ պատերից։ Բայց նրան սատակեցի վրա բանում են, կոխում են մի ծակի մէջ և ոչնչան ծուխ ու մուխ են տալիս, որ հոգին դուրս է գալիս...

—Ուրեմն մենք էլ պէտք է ծակը կոխենք, հարցրեց ծերունին և նրա դէմքի խորշումների մէջ երևացին սարսափելի ցնցումներ, որ նրան էին սատակի բերելու։

—Այդ, պատասխանեց էֆենդին սառնասրտութեամբ։

—Բայց նա եկել էր Վանքի մասին առաջարկութիւն անելու, նրա ձեռքը խնդրելու և իր սէրը յայտնելու։ Ինչու բոլորը մոռացաս նա, ինչու այսպէս տանջում էր ողորմելի հոգը։ Թօմաս էֆենդի, ինչպէս վերը ասեցինք, աչքատես էր ծերունի տանուտէրին այնպիսի մի անեծանելի դրութեան մէջ դնել և այնպիսի մի համոզման բերել, որ ստիպված լինի մասնել, թէ իրանց փրկութիւնը միայն էֆենդիով կը լինի և Լալան պէտք է զոհվի այդ փրկութեան համար։ Որովհետև էֆենդին գիտէր, որ ծերունին հեշտութեամբ չի յոժարվի աղջիկը իրան կնութեան տալ մանաւանդ այն խօսքերից յետոյ, որ նա ասեց և զգացնեց, թէ էֆենդին զանազան երկրներում հիմներ է թողել, և իրը անկարող եղաւ ներելու այդ ճշմարտութիւնը։

Բայց էֆենդին նկատելով, որ ինքը չափը անցաւ, պէտք չէր այդ ստոյգան յանտանջեցնել ծերունուն, սկսեց նրան մխիթարել ասելով.

—Ինչ մի քանի օր ամուսնացված կը պահեն, իրաւ է, բայց այդ միայն ձեզ համար կը լինի։ Թօմաս էֆենդին գործը այնպէս է սարքել, որ ձեզ վնաս չի հասնի։

Ծերունին ոչինչ չը պատասխանեց։ Նա տեսնում էր մեծ զանգուածներ էֆենդու առաջ։ տանուտեան և այլ մեծ խօսակցութեան մէջ։ Նրա սրտում ծագեց մի միտք կասկած....

(Կը շարունակվի)